նշանաւոր շարժումներին և անցքերին Ֆրանսիայի մէջ։ Նա վախճանվեցաւ իր կալուածքի մէջ, մինչև վերջին րոպէն պահպանելով իր մտաւորական ոյժերը։ Նա համոզմամբ հանրապետական էր, բայց ընդդէմ չէր սահմանադրական և ազատամիտ միապետութեանը։ Հանգուցեալը եռանդոտ կաթոլիկ էր և վախենում էր արմատականներից։ Նա Թիերի նման „հանրապետութիւն էր ցանկանում, բայց առանց հանրապետականների“։ Դիւֆոր վախճանվեցաւ մոռացված իր ժամանակակիցներից, բայց այնպիսի անուն թողեց, որ յարգված է բոլոր կուսակցութիւններից։

Ֆրանսիական Ֆինանսների մինիստրը սովորութիւն ունի իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ հաշիւ հրատարակել ստացված հարկերի մասին։ Յունիսի առաջին կէսի համար հրատարակված հաշիւը չէր կարող չուրախացնել Ֆրանսիացիներին, որովհետև այդ ժամանակամիջոցի ընթացքում 15,000,000 ֆրանկ աւելորդ հարկ է ստացված, քան թէ կառավարութիւնը ըսպասում էր, այնպէս որ իւրաքանչիւր օր մի միլիոն աւելորդ հարկ է ստացված։ „Մենք ի հարկէ չենք կարծում, որ այդպիսի աւելորդ կը ստացվի իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ, նկատում է այդ առիթով „Temps“ լրագիրը, բայց այնուամենայնիւ $5^1/_2$ ամիսների ընթացքում իւրաքանչիւր օր աւելորդ հարկ է ստացված գոնեա կէս միլիոնից աւելի։ Այդ աւելորդը լինում է կէս միլիոնից մինչև մէկ միլիոն, այնպէս որ տարվայ ընթացքում կարելի է 182 մինչև 365 միլիոն ֆրանկ աւելորդ հարկ ստանալ։ Այսպիսի գեղեցիկ հետևանքից հանրապետութիւնը կարող է կատարելապէս գոհ լինել“։

Թէ պատգամաւորների ժողովը և թէ Ֆրանսիական մամուլը չափազանց վրդովված են Ալժիրիայի մէջ կատարվող անցքերի պատճառով։ Լրագիրները նկարագրում են աւազակապետ Բու-Ամեմի անգթութիւնները, որ իր աւազակներով գերի տարաւ անապատը հարիւրաւոր ֆրանսիական և սպանիական ընտանիքներ, որպէս զի Ֆրանսիական կառավարութիւնը մեծ գումար վճարէ նրանց յետգնելու համար։ Ալժիրիայի բոլոր պատգամաւորները մի հարց ստորագրեցին, որ շուտով կը ներկայացնվի կառավարութեանը։ Այդ հարցը չափազանց խիստ է և յարձակվում է Ալժիրիայի նահանգապետ, հանրապետութեան նախագահի եղբայր Ալբերտ Գրեվիի վրա։ „Voltaire“ և „Temps“ լրագիրները ստորագրութիւն են բացել Ալժիրիայում վնասվածների օգտին։ Ասում են, որ Բու-Ամեմ չէ հեռացել Ալժիրիայից և նոր յարձակումն է պատրաստում։ Բու-Ամեմ 300—400 սպանիացի գերիներ է վերցրել։

Յունիսից հաղորդում են, որ նրա հարաւային մասում մեծ շարժում է նկատվում։ Բու-Ամեմի համարձակ յարձակումները և Ֆրանսիական զօրքերի անմեկնելի դանդաղութիւնը բարձրացրին տեղացիների պատերազմական ոգին և վնասում են Ֆրանսիայի հեղինակութեանը։

Ֆրանսիայի ներկայացուցիչը Կ. Պոլսի մէջ սուլթանից չը ստացաւ հրաժարական ընդունելութիւն։ Երևի նա Կ. Պոլիս չի վերադառնայ մինչև Բ. Դուռը չը փոխի իր բռնած ընթացքը Յունիսի վերաբերութեամբ։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻԱՑԻՑ

—

Վան, 25 մայիս

Տասն հինգ օրից աւելի էր որ Վանի հայ ժողովուրդ կը յուզուէր մի բանի համար, կամ թէ սապէս ասենք 15 օրից աւելի էր որ Վանի մէջ մի օրուայ խնդիր յարուցած էր. այն էր ազգային սահմանադրութեան ԻԱ տարեդարձը տօնելու կամ չը տօնելու խնդիրը։

Թիւրքիոյ կառավարութիւն մօտերս լսարաններ, խօսարաններ, և թաղային հաւաքումներ արգելած և այս մասին մի խիստ հրամանագիր մը ուղղած էր տեղւոյս ազգային առաջնորդարանին, առաջնորդարանն ալ սոյն հրամանը հաղորդեց ամբողջ Վանի հայ ժողովրդեան. զարմանալին սա է որ մինչդեռ մենք ամենքս թէ հայ և թէ թուրք, հաւատարապէս օսմանցի պիտի նկատուինք տէրութեան հազար անգամ կրկնած իրադէներու համեմատ, բայց և այնպէս այսպիսի արգելումներ միայն հայ ժողովրդի համար կը լինին։

Ինչ և է մոռնանք սա կէտը-խնդիրէն չը տեղելու համար. կառավարութիւնն արգելած էր ըսինք ժողովրդական գումարումներ առանց պատճառ մը ցոյց տալու։ Վանի ժողովուրդը այս արգելքը լսածին հետևեալ օրը Արարքի վարժարան գումարուեցաւ Հայաստանի Առաքելոց Կեդրոնական յանձնաժողովին և նորա մասնաժողովներուն, որք կը գտնուէին դանազան քաղաքներում և ամբողջ անոնց որք նպաստեցին Վասպուրականի ժողովուրդը անցեալ տարիներու ահռելի սովէն ազատելով զայն, չնորհակալութեան և երախտագիտական ցոյցեր արին. 2000-ի չափ բազմութիւն մը լեցուած էր հոն. ժողովուրդը խիստ զգածուած էր, շատերն կարտասուէին մտաբերելով սովից իրենց քաշած նեղութիւններն և օրհնելով այն բարերարաց անուններն, որք կեանք տուին իրեն վերատին. հանդէսը տեւեց իբր 2 ժամ և ժողովուրդը ցրուեցաւ տանելով իր հետ անմոռաց յիշատակ մը։

Հայրենասէր Սանուց ընկերութիւնն Ազգ. Սահմանադրութեան ԻԱ տարեդարձը տօնել իր վրայ առած լինելով, 7 անձէ բաղկացեալ մի կարգադիր մասնաժողով ընտրած էր հանդիսի չքեղութեան համար պէտք եղած կարգադրութիւններ անելու։ Հանդէսը կատարվեցաւ Յանկոյսներ եկեղեցւոյ դերեզմանատանը։ Հանդիսէն գոյացած հասոյթը պիտի տրուէր Հայրենասէր ընկերութեան Հայկազեան վարժարանին. մուտքի և ճաշկերոյթի տոմսակներ պատրաստված էին. մուտքի տոմսակ ունեցող իրաւունք կունենար հանդիսավայր մտնելով հանդիսին ներկայ գտնուելու և ճաշին մասնակցելու իրաւունք կունենային։

Թէ տեղական կառավարութենէն և թէ Վանի առաջնորդական փոխանորդ Հ. Գարեգին Սրբուանձտեանցէն քանիցս ազգարարութիւններ եղան Կարգադիր մասնաժողովին թէ արգելուած են ժողովրդական հաւաքումներ և ազգային հանդէսներ, բայց Կարգադիր ժողով այդ ազգարարութիւններ լսելով հանդերձ որոշեց տօնել օսմանեան տէրութեան հայոց ազգին չնորհած սահմանադրութեան ԻԱ. տարեդարձի հանդէսը. ամեն տեսակ կարգադրութիւններ եղան մինչ մայիս 24 ի առաւօտ. ճիշդ այն պահուն որ ժողովուրդը քաղաքիս Թաղերէն Բէնդրէի հայկազեան դպրոցը համախմբուած և դրօշակներ բացած յատուկ պատրաստուած նուագածուներու և երգչաց խումբի մը երգեցողութեամբ դէպի Յանկոյսներ կերթար, ուր էր հանդիսավայրն, տեղական կառավարութիւնը զօրաց փաչան, քաղաքիս ընդհանուր դատախազ Ասիմ պէյ և եղեռնադատ ատենին նախագահ Բէուքֆ պէյ 100 հատ զօրքով կայծակի արագութեամբ Յանկոյսներ խրկած էր հոն խմբուած հայ ժողովուրդը ցրուելու և հանդէսը տօնողներու պարագլուխներուն ձերբակալելու համար. յիշեալ պէյեր և փաչան Կարգադիր մասնաժողովին քանի մ՝անդամներ կանչելով կուսակալին հրամանը հաղորդեցին անոնց, ասենք ալ պատասխանեցին թէ «մենք չենք որ կը տօնենք Սահմանադրութիւնը, այլ ժողովուրդն է, ձեր հրամանը կարող էք հաղորդել ժողովրդեանն»։ Հազար ու մէկ ըսպառնալիքներ արին, խնդրեցին, աղաչեցին, պաղատեցին վերջապէս չընդունուեցաւ նոյա խնդիրքը, և ժողովուրդը յաջողեցաւ տօնել սահմանադրութեան ԻԱ տարեդարձի հանդէսը հակառակ տեղական կառավարութեան կամաց։ Հանդէսը սկսեց ժամ 3-ին, և հայոց Մրցաւեալ ընկերութեանց վարժապետանոցի աշակերտներէն մի քանիսը իրենց մարմնամարզի ուսուցիչ պ. Կարապետ Փիլիպպոսեանի հետ ձիավարժութիւններ արին այնչափ յաջողակութեամբ, որ ներկայ եղող բոլոր ժողովուրդը յակճիռս կրթեցաւ. պ. Փիլիպպոսեան ուսում առած է Ռուսաստանում և Վանի դիւցազն եղած է քանի մ՝ամսէ ի վեր։

Զիավարժութիւնը տեւեց $2^1/_4$ ժամ, որմէ յետոյ ճաշկերոյթը տեղի ունեցաւ եկեղեցւոյ բակին մէջ և 200-ից աւելի մարդիկ ճաշեցին, որոնցմէ 100 անձ միայն ճաշկերոյթի տոմսակ ունէին, իսկ մնացած հարիւրն ժողովուրդը ցրուելու եկող զօրքերն էին, որք ձրի հաց տեսնելով աճապարեցին առիթից օգուտ քաղել. ճաշկերոյթը կարելի եղածին չափ չքեղ և վայելուչ անելու համար Կարգադիր մասնաժողով ոչ մի ջանք խնայած չէր։ Ճաշը սկսեց ժամ 6-ին և տեւեց մինչև ժամ 8, (աղաթուրքայ), որից յետոյ ժողովուրդը հանդիսավայր գնաց. հանդիսականներն կանցնէին կամարի մը տակէն որ զարդարուած էր գոյնզգոյն ծաղիկներով, և կամարի երկու կողմերն նստած էին զոյգ մը աղջիկներ՝ որք ծաղիկներ կը տիրէին կամարին տակէն անցնող հանդիսականաց վրայ։ Ատենախօսից բեմն ալ նմանապէս զարդարուած էր գոյնզգոյն ծաղիկներով և պատկերներով. հանդէսը տեւեց 2 ժամ, և ատենախօսեցին քաղաքիս նշանաւոր ուսումնականներէն մի քանիսը։ Կարդացուած ճառերն կառավարութեան խնդրանօք յանձնուեցան նմա, ստուգելու համար թէ անոնց մէջ կառավարութեան դպչելիք կէտեր կային թէ ոչ։

Հանդէսը գացուելէն վերջ տեղական պարեր ներկայացուեցան, որ տեւեց 2 ժամ, հուսկ ուրեմն ժողովուրդը հանդիսավայրէն մեկնեցաւ և գնաց ուղղակի Խրիմեան հայրիկի տան առջև երգեր երգեց, և իր սիրելի և պաշտելի հայրիկին համար բարեմաղթութիւններ արեց, «Կեցցէ»-ներ գոռալով։ Անկից ալ ժողովուրդը մեկնեցաւ և գնաց ռուսական և անգլիական հիւպատոսարանաց առջևն ևս նոյն ցոյցերն արեց։ Այս հանդիսին ներկայ էին ռուսական փոխ-հիւպատոս պ. Կամսարական և Անգլիոյ փոխ-հիւպատոս պ. Էմիլիուս Կէյթը (պարսից դեսպանն ալ թէև հրաւիրուած էր, բայց եկած չէր) և ուրիշ շատ մը նշանաւոր անձինք. հանդիսականներ 8000-ից աւելի էին թէ այր և թէ կին։

Ահա այսպէս վերջացաւ այս հանդէսը, որոյ տեղի չունենալուն համար աշխատեցան թէ տեղական կառավարութիւն, թէ հայր Գարեգին Սրուանձտեանց և թէ ուրիշ շատ մը անխոհեմ խոհեմներ (!)

Վանի հայ ժողովուրդը չը պիտի մոռնայ երբէք 81-ի մայիս 24-ը, զի այն օր չէ թէ միայն Ազգ. սահմանադրութեան տարեդարձը տօնեց, այլ մի քայլ արեց նա իր իրաւունքներ պաշտպանելու մեծ գործի մէջ։

Բաղեշէն գրուած Նամակ մը կիմանամ որ մայիս 18-ին հոն մեծ երկրաշարժ մը եղած է, անանկ որ Բաղեշէն 8 ժամ հեռու գտնուող Թեղուտ անուն գիւղ բոլորովին հիմնայատակ եղած է, փլած տուներու մէջ 95 անձինք մեռած և 34 վիրաւորվածներ գտնուած են ցարդ. սոյն գետնաշարժի ցնցումը Բաղեշէն ալ զգրգած է թէև, բայց վնաս չէ պատահած։ Վանի մէջ ևս նոյն օր և հետևեալ օր զգացուեցան ցնցումներ, բայց ոչինչ չը պատահեցաւ։ Անգլիական դեսպան պ. Կէյթը, քանի մ՝օրէն ի վեր Թեղուտ գնացած է, իրաց վիճակը քննելու համար։

Վանեցի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԱՅԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի։ Պաշտօնական։ Կովկասեան շրջանի շտաբի մէջ ծառայող Բուտուրլին նշանակված է Կովկասեան առաջին դիվիզիայի շտաբի գլխաւորի պաշտօնակատար։ Սկօլիօվսկի նշանակված է փոխ-դիրեկտոր տնտեսական բաժնի ներքին գործերի մինիստրութեան։ Վօլկով նշանակված է մինիստրի կանցելիարիայի կառավարիչ։ „Голосъ“ հաղորդում է որ Բոստով - Վլադիկավկասեան երկաթուղու խորտակման ժամանակ, Ստեպնայա կայարանի վրա, վեց վագոններ կատարելապէս փշրվեցան, ինն մարդ սպանվեցան, տասն և չորս ծանր վիրաւորվեցան և բազմաթիւ ճանապարհորդների թեթև կերպով վիրաւորվեցան։

ԿՐՕՆՇՏԱԴ, 25 յունիսի։ Ճաշի ժամանակ որ արվեցաւ Կրոնշտադի նաւատորմի ներկայացուցիչներից ի պատիւ անգլիական նաւատորմի, որի առաջնորդն է պրինց Էդինբուրգեան, ներկայ էին Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, Կազակեվիչ, Պեշչուրով և Բուտակով իր եղբօր հետ։ Ճառեր չարտասանվեցան, եօթ տօստ առաջարկվեցան ռուսերէն և անգլիերեն լեզուով՝ Վիկտորիա թագուհու, թագաւոր կայսրի կենացը, անգլիական և ռուսաց նաւատորմի ծաղկման, Էդինբուրգեան հերցոգի և հերցոգուհու և Ալէքսէյ Ալէքսանդրովիչի կենացը։ Ճաշկերոյթի մէջ կային 149 հոգի

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 25 յունիսի։ Ապստամբված արաբների պետը Բու-Ամեկո, դիմեց Մօրոկկոի սուլթանին, հրաւիրելով նրան Աֆրիկայի շարժման առաջնորդութիւնը յանձն առնել, որովհետև նա յայտնված է հիւսիսային Աֆրիկայի խալիֆ։

ՓԱՐԻԶ, 25 յունիսի։ Ալժիրիայի նահանգապետ Ալբերտ Դրէվիի տեղ կը նշանակվի Լէօն Ռընօ։

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի։ Գերմանական դեսպան Կ. Պոլսի մէջ կը նշանակվի կոմս Հացֆէլդի տեղ, Ֆօն-Բադովից։

ԲՈՒԴԱ, 25 յունիսի։ Սկուտարիից հաղորդում են որ Թիւրքաց կառավարութիւնը պահանջում է տեղական ժողովրդից երկու տարուայ համար հարկերի կանխիկ վճարելը, մինչև որ ազգաբնակութիւնը կը սկսի մասնակցել պետական պարտքերի մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիսի։ Պաշտօնապէս հաղորդում են. Ներքին գործերի մինիստրը որոշից արգելել „Московскій Телеграфъ“ լրագրի հատով ծախվելը։ „Голосъ“ լրագրին հաղորդում են Կրօնշտադից. յունիսի 27-ին հեռացաւ անգլիական պահեստի նաւատորմը։ Նրան այցելեցին Թագաւորը, Թագուհին և կայսերական տան անդամները։

ՍԻՍՏՕՎՕ, 26 յունիսի։ Երէկ հասաւ այստեղ գեներալ Իգնատիև։ Էգուց կը հասնեն Աւստրիայի և Գերմանիայի դիպլոմատական գործակատարները։ Տիրնօվօի մէջ ընտրված և այստեղ հասած Յանկով, Սլաւէյկով և Կարավելով պատգամաւորները մտադիր չեն մասնակցել ազգային ժողովի նիստերին։ Ընտրված բոլոր պատգամաւորները 328 մարդ են, բացի չորսից դրանք բոլորն էլ պատկանում են պահպանողական կուսակցութեանը։ Այսօր հասաւ այստեղ բոլգարական էգզարխոսը։

Կ. ՊՕԼԻՍ, 27 յունիսի։ Շէյխ-ուլ-իսլամ յայտնեց, որ Շարիաթի հիման վրա խալիֆի սպանողները պէտք է միայն սրով մահուան պատժի ենթարկվին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունիսի։ Պաշտօնապէս հաղորդում են. Ծովային ուսումնարանական հիմնարկութիւնների մասնաժողովի նախագահ Զելէօնոյ հիւանդութեան պատճառով արձակված է իր պաշտօնից, մնալով ծովային գլխաւոր դատարանի անդամ։ Տպագրական գործերի վարչութեան խորհուրդի անդամ Վէսիօլոյ նշանակված է կայսերական բաժինների դիրեկտոր և ծովային ուսումնարանների մասնաժողովի նախագահ։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է. Թագաւորը և Թագուհին ընդունեցին Պօրտուգալիայի արտաքոյ կարգի դեսպան և լիազօր մինիստրին, որ Նրանց համար և Թագաժառանգի համար բերել է պօրտուգալական շքանշաններ։

ԼՕՆԴՕՆ, 26 յունիսի։ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ զլխաւոր դատարանը հաստատեց առաջին դատարանի վճիռը Միհատ-փաշայի և միւսների գործի վերաբերութեամբ։

ՏՈՒՆԻՍ, 26 յունիսի։ Ներքին նահանգների մէջ ապստամբութիւններ են սկսված։ Զօրքեր են ուղարկված ապստամբների դէմ, որոնց թիւը հետզհետէ պակասում է, որովհետև Նրանցից շատերը անցնում են թշնամու կողմը։

Կ. ՊՕԼԻՍ, 26 յունիսի։ Բ. Դուռը վրձռել է դարձեալ չորս բատալիոն ուղարկել Պրիզրենդ և Պեկա, որովհետև ալբանական միութեան զօրքերը սպառնող դիրք են բռնել։

ՀՌՕՄ, 26 յունիսի։ Աւստրիայի ցանկութեան համեմատ իտալական կառավարութիւնը վճռեց վերադարձնել Նէապոլի նախկին թագաւորին նրա հանդուցեալ մօր կայքերը, որոնք Նրանից խլված էին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ